

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏՈՒԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Է. Բ. ԱՂԱՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ քրթակից-անդամ

Ա Ռ Ի Ք

Հին մատենագրությամբ ավանգված չէ. լայնորեն գործածվում է բար-
րաուներամ՝ «առաստաղ» նշանակությամբ, անեզական բաս է, որի սեռականը՝
առից «առիքի, առաստաղի» նշանակությամբ. ըստ Հր. Աճառյանի¹, պահ-
պանված է Չարոանճաքում, Մագում է հն/ս. rēt «ձող, գերան, բուն, գերա-
նակապ» արմատից, որի ցեղակից ձևերն են. հին բարձր. գերմ. ruota, հին
իսլ. rota «գերան, ձող, գավազան», հին սաքս. roda «փայտե խաչ (pfahl-
kreuz)», անգսքս. rod «ցուպ, գավազան», եկեղեցասլավոնական ratište, rato-
rište «նիգակարուն», Ընտ ալամ հայ. առիք նախապես նշանակել է գերան-
ներ, գերանակապ և ճիշտ նույն իմաստալին զարգացումն ունի, ինչ որ՝ ձև-
դուն, որի արմատն է ձեղ — «ձող, գերան», Հնչլունական տեսակետից ոչ մի
կասկած չի հարուցում. rēt հայերենում պետք է տար քի, սակայն հայերե-
նում ի-ից հետո յ-ն միշտ ընկնում է (ի-ից հետո յ լինել չի կարող), ուստի
և՛ քի. նախահավելված ձայնավորը պարտադիր է ք-ից առաջ. միակ դժվար-
ությունն է ներկայացնում թերևս հն/ս. r > հայ. ո համապատասխանու-
թյունը, բայց սա էլ հաճախ է լինում բառակզրում (հմմտ. հն/ս. par > հայ.
առ (նախդիրը), հն/ս. reug՝ > հայ. առեւծ/առիւծ, հն/ս. ar > հայ. առի (առ-
նուլ բայի կաարալալի առաջին գեմքը) և իրանական փոխառություններում՝
պհ/ս. *rasan > հայ. առասան, պհ/ս. rāt > հայ. առատ և ալլն), Այս նույն ար-
մատից ծագած ենք համարում նաև երկ պատուհան, լուսամուտ («*rēt >
rēt ձևից»)՝ իբր փայտե շինվածք և թերևս՝ առեղ, որը Գ. Զահուկյանը բխած
է համարում *el-el- նախաձևից՝ առ-մասնիկով՝. «1. երկար ու հաստ գերան,
որի վրա նստում է սալը և որից կապվում են լուծն ու եղները, 2. առաս-
տաղի մեջտեղի մեծ գերանը: Այս վերջինի համար հարկ կլինի կանխադրել
հն/ս. արմատի *rēt ձևը (Պոկորնի² բերում է միայն ret, röt, rät ձևերը)՝
-elo/-ela մասնիկով՝ rētēlo > առեւեղ, որից եւե > ք ամփոփումով (հմմտ.
գեւեղ > գեղ)՝ առեղ:

ԸՆԶՈՒԻԼ, ԸՆԾՈՒԻԼ

Գործածվել է հին մատենագրության մեջ՝ «ծել, ծագել, բխել, ճառա-
գալթել» իմաստներով: Հր. Աճառյանը արմատն է համարում ինճ, իսկ ու-ն՝

¹ Հր. Աճառյան, Արմատական բառարան, Ա, 515 (տեքստում հիշելու ենք Արմ. համա-
ռոտագրությամբ):

² J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I, Bern und Mün-
chen, 1959, էջ 866 (տեքստում հիշելու ենք Պոկ. համառոտագրությամբ):

³ «Պատմա-բանասիրական հանգես», 1963, № 4, էջ 89:

մասնիկ. նույն արմատի հետ է կապում նաև ընձիւղ/ընծիւղ, որի մասնիկն է համարում -իւղ: Մեր կարծիքով ընձուիլ բառի արմատն է ձիւ/ծիւ, իսկ ըն նախածանց է, ինչպես և ընձիւղ/ընծիւղ բառի մեջ: Երկուսի մեջ էլ ունենք ծիւղ/ծիւ արմատը: Ընձիւղի բառն ստուգաբանիկ են Շեֆտերի վիցը և Պեդերսենը. առաջինը մեր բառը կապում է հին իսլ. kioln, հին բարձր գերմ. kil «ծիւ», անգլ. quill «փետուր» և գերմ. Kiel «փետուրի ցողունը» բառերի հետ. երկրորդը՝ հուն. νεο-γίλος «նորածին», գոթ. keinen «ծիւ», լիտ. židetis «ծաղիկ» բառերի հետ: Պոկոնին՝ միավորելով այդ երկուսը, հայ. ընձիւղ/ընծիւղ-ը ծիւ, ծիւղ, ծեղ բառերի հետ դնում է հնիս. g'eil-, gi- «ծիւ», բողբոջի, բացվիլ (բողբոջի, ծաղկի), ծաղկել» արմատի տակ, համեմատելով գոթ. keinan «ծիւ», բողբոջի, անգլ. cinan «պալթել, բացվել», հին սաքս. kimo «բողբոջ, ծիւ, ընձուղ», հին բարձր գերմ. kil «սեպ», լատիշ. zēļus, zīet «ծաղիկ». երևալ, լիտվ. žy'd(zi)u, zy'dėti «ծաղկել»: Վերջին անգամ, այս ստուգաբանության վրա հենվելով, իրար հետ կապեց հայ. ծիւ, ծիւղ, ընձիւղ, ծիւ, շիւ բառերը Պ. Բեդերյանը¹. ավելացնելով նաև ցիւղ, ցեղ և հարակից բառերը: Ընդունելով ծիւ, ծիւղ, ծեղ, ծիւ (ընձիւղ) բառերի ժազուժուարանական միասնությունը² և միացնելով դրանց նաև ընձուիլ բառը, հարկ ենք համարում ավելացնել հետևյալը: Հնդեվրոպական արմատը պահվել է միայն հայերեն, բալթիական և գերմանական լեզուներում, ըստ որում գերմանական և բալթիական ձևերի համար կանխադրվում է d-ով աճած ձև (gēid-/gi-d), ինչպես և -lo/-la մասնիկը (հմմտ. հին բարձր գերմ. kidel «սեպ»). հայերեն ծիւ, ծեղ ձևերը ենթադրում են gi-lo, gēlo ձևերը. ինչ վերաբերում է ծիւղ և ընձիւղ, ընձուիլ բառերին, ապա իւ երկբարբառի համար պետք է կանխադրել նաև gēu- ձևը, որից կարող էր ստացվել ծիւ. լ/ղ-ով ձևերն առաջանում են -lo/-la մասնիկով ձևից. gēu- պարզ ձևից է ինչպես ծիւ բառը, այնպես էլ՝ ընձուիլ (*gēu > ըն)ծիվ, ընծիւիլ > ընձուիլ/ընծուիլ): Ընձուիլ բառի երկու՝ «ծիւ», բողբոջի և «ճառագեի» իմաստները նույնպիսի հարաբերության մեջ են իրար հետ, ինչպես շառաւիղ բառի «սոս», «ճուղ» և «ճառագալթ» իմաստները:

ՈՒՐԴ, ՀՈՐԴ ՎՃԱՆԱՊԱՐՀ

Ուրդ բառը սակավ գործածություն ունի հին մատենագրության մեջ, բայց շատ տարածված է բարբառներում. բառարաններում բացատրվում է վրբ պարտեղները ջրիւս փոքրիկ առու». բերելով բարբառային մի շարժ ձևեր (Արմ., Ե, 701), Հր. Աճառյանը չի տալիս որևէ նոր նշանակություն, ոսկալն Ամատունին իր «Հայոց բառ ու բան»-ում (էջ 538) բացատրում է՝ «արտի կորիների (առու) բերան, կավառ, որտեղից ջուրը մտնում է մարգերի մեջ». արդի բարբառներում ուրդ-ը ավելի հաճախ մեծ առվից սկիզբ առնող ավելի փոքր առվի սկիզբն է, որ բացվում և փակվում է (հատուկ հարմարանքով, քարով կամ տախտակով և այլն). ՆՃԲ-ն էլ ուրդ-ի համար տալիս

¹ Պ. Բ. Աղայան, Մի քանի ստուգաբանություններ, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 1, էջ 139—146.

² Ծիւղ, ցեղ, ցիւղ և այդ խմբի մյուս բառերի կապը ծիւ, ծիւղ, ծիւ, ընծիւղ բառերի հետ չենք ընդունում. առաջին խմբի (ճիւղ ևն) բառերի մեր ստուգաբանությունը տե՛ս «Բաների երկանի համալսարանի», 1968, 1, էջ 173—174:

է նաև թշրի խողովակ, շրանցք. ավազան» իմաստները: Ի մի բերելով բոլոր այդ նշանակաթյունները, կարելի է բառինախնական իմաստը համարել թանցք. ճանապարհ» և, մասնավորապես, շշրի համար բացված անցք՝ ճանապարհ»: Այս իմաստով բառը նույնանուն է հորդ թանցք, անցում, բացված ճանապարհ» բառին (չշիթի ղորդ, գրբ. յորդ Եվարար, առաա, առատահոս» բասի հետ). այդ արմատից են՝ հորդել Եճանապարհ բացել՝ մաքրել՝ պատրաստել», հորդիլ Եգնայ, տարածվել», հորդան Եալ Եառաջ մղել՝ վարել՝ քշել», ինչպես և ուհահորդ Եճանապարհորդ», Եներհորդիլ Եառաջ խաղալ, առաջանալ» և այլն: Երկու բառն էլ (հորդ, ուրդ) ծագում են հնիս. per-, perə- արմատից, որի սկզբնական իմաստն է. 1. մյուս կողմը տանել՝ վարել՝ մղել, 2. ճանապարհ բացել, 3. (իբրև գոյական) մուտք, անցք, 4. Ենավակ»: Մեր ուրդ բառը ծագում է հնիս. արմատի միջին ձայնդարձով por-tus ձևից, որի ժտոանգններն են՝ ավետ. pərtus Եմուտք. հուն», լատ. portus Եդուս, դարպաս», հին բարձր գերմ. ford Եհուն» և այլն. ուրդ ձևի համար պետք է կանխադրել արմատի երկար ձայնավոր (pōrtus): Ինչ վերաբերում է հորդ բառին, տպա դա ստուգաբանված է Շեֆտելովիցի կողմից. նրա ստուգաբանությունն ընդանում են Վալդեն, Բուազաքը, Պոկոնին (տե՛ս Պոկ., 816) և Գ. Ջահուկյանը, բայց մերժում է չր. Աճառյանը՝ առանց որևէ պատճառաբանություն րերելու. թերևս նկատի ունի նախահունչ հի-ի առկայությունը (հնիս. p-ն 0-ից առաջ ընկնում է և ոչ թե դառնում հ). ոտկայն այդ չի կարող հիմք ծառայել հորդ < հնիս. portus համապատասխանությունը ժխտելու համար, ըստ որում հայերենը շատ հաճախ բառասկզբի ձայնավորից և ուրջ ավելացնում է հ. իբրև նույն կարգի օրինակ կարող ենք հիշել հնիս. ponti > հայ. հուն, և իր իսկ՝ չր. Աճառյանի ստուգաբանությամբ՝ հնիս. poti > հայ. հոյ/ակապ/:

ԿԱՐ, ԿԱՐ(ԱՎԱՆԴ)

Իտուի առաջին իմաստն է Եպարան, չվան, լար, առասան», որից բխել են Եհոդ, կարելը» և այլ նշանակությունները: Ծագում է հնիս. ger Եդարձնել, պտտել, ոլորել, փաթաթել» արմատից⁶: Արմատը շատ մեծ զարգացում է ունեցել ցեղակից լեզուների մեջ թե՛ ձևի և թե՛ իմաստի տեսակետից՝ տալով մարմնի անդամների (մեջք, ոտք, կուռ), զանազան գործիքների ու գործողությունների (կարթ, ջուլհակի հաստոց) անվանումներ: Մեր բառի դազահեռներն են հին հնդկ. gunā-h (*gr-no-s) Եպարանի՝ լարի առանձին թել, առասան, չվան», անգլ. cranc-stoef Եչյուսելու գործիք», crencestre Եջուլհակուհի», հին հնդկ. granth-, grathnā'mi Եփաթաթել, ոլորել, կապել, հանգուլց անել», հին իուլ. grinne Եհանգուլց, կապ, տրցակ» և այլն (Պոկ-385—390)

Այս արմատի հետ ենք նույնացնում կարաւանդ բառի առաջին բաղադրիչը՝ կար: ՆՉԻ այս բառը բացատրում է Եսնակուշտ» կամ Եդրահի վրալի կարած կամ զոգված տեղերը». չր. Աճառյանը հիշում է նաև Երեմիայի բառարանի կարաւանդ Եդրահի կապ» և ակարաւանդ Եյոդք զըհհից» բառերը,

⁶ Ոլորել իմաստի Եկար, կարել, թել» իմաստների զարգացման համար հմտ. դարձ. դեր-օան, դերձակ. հանդերձ բառերը, որոնց նախնական (հնդեվրոպական) իմաստն է դարձյալ ոլորել, պտտել, շրջել»:

եզրակացնելով, որ ավելի հավանական է ՆՀԲ-ի երկրորդ բացատրությունը միակ գործածության մեջ էլ, թեև դրված է հունարեն բնագրի «անակուշտ» բառի փոխարեն, բայց այդ իմաստին չի համապատասխանում. ահա այդ գործածությունը. «Վիրաւորեցաւ ընդ կարաւանդսն ի ներքս» (ՄԳԻ, Ա. թագ., լա. Յ), Այս նախադասությունը պետք է թարգմանել՝ «վիրավորվեց կարավանդները տակ՝ ներսը», որով կարաւանդ-ը կդառնա գրահը: Մեր կարծիքով կարաւանդ-ը օգտագրահն է, ըստ բաղադրիչների՝ կար ճհանդույց, կար» և լանդ (< վանդ) սկայս. այն նշանակել է ճհանդույցներով կապված՝ հյուսված», որով և կստացվի օգտագրահը: Երկրորդ բաղադրիչը ծանոթ է իրանական փոխառություններից և նշանակում է սկայս (իրան. բանդ)՝:

Ա Ն Յ

Հայերենի շատ արգասավոր արմատներից է, որից, բացի անցնել, անցք բառերից և դրանց բազմաթիվ բարդություններից, յ, զ և առ նախդիրներով կազմվել են այժմ արդեն արմատների վերածված բառեր, ինչպես՝ յանց (յանցանել, յանցանք ևն), զանց (զանցանել, գերազանց են), առանց (առանցանել ճրանդագուշել, զառանցել», առանցիկ ճառասպելական», առանցք ևն), զառանց (զառանցել, զառանցական են): Արմատի նախնական իմաստն է ճանցք, ճանապարհ, անցում, ընթացք», որից նաև՝ «ենդոթություն, դիպված, պատահար»: Մագում է հնիս. sent- ռուղղվել, դիմել, գնալ, ընթանալ, ընթացք, անցք, ճանապարհ» արմատից. ցեղակից ձևերն են. ավետտ. hant- ճհասնել, հասցնել», հին իռլ. sēt, կիմր. hynt, բրետոն. hen ճհասնապարհ», հին սաքս. sith ճհասնապարհ, ուղղություն», անգլ. sith ճհանցք, ճանապարհորդություն, անգամ», գոթ. sinu ճերթ», ga-sinða ճընկեր», sandjan ռուղարկել», հին իռլ. senda ճգնալ», sinni ճընթացք, ճամփորդություն», sinn ճանգամ», հին բարձր գերմ. sinnan ճգնալ, ճամփորդել, գալ», sindon ճհամփորդել», sinden ռուղարկել», լիտվ. siunėiù, յատիշ. sutu ռուղարկել» և այլն (Պոկ., 908), Հայերենը ծագում է արմատի -sko մասնիկով աճած ձևից՝ ստորին ճայնդարձով (*sn(t)-sko > անց): Նույն արմատից է ծագում նաև հայ. ընթանալ բառի ընթ- արմատը, որի համար Հր. Աճառյանը կանխադրում է *senth նախաձևը (*senth > *ինթ-անալ > ընթանալ):

Ա Ս Կ Ն

Իմաստն է ճստտակ». հին մատենագրության մեջ գործածվել է միայն միակ անգամ: Մագում է հնիս. as արմատի azg աճած ձևից, որ նշանակում է սվառել, այրել, այրվել, շողալ, փայլել»: Ցեղակից ձևերն են. հին հնդկ. asa-h մոխիր», լատ. ara ճգոհասեղան, ճոհարան» (նախնական սկրակ) իմաստից. հմմտ. ara sepulcri ճթաղման կրակ», areo ճչոր լինել, տոչորվել», aridus ճչոր», ardēo ճայրվել», հին իռլ. arinn սկրակի տեղ, կրակարան, բարձր տեղ, բարձունք» (իբր կրակ վառելու տեղ), թոխ. as (պտճո. բայ) ճչորացնել», խեթ. ha-aš-š-i (գործ. հոլ.) սկրակարան», հուն. ἀΐαιεος ճրոնկուն, բորբոքուն, վառվառն» և այլն (Պոկ., 68): Հնիս. zg-ն հայերենում դառնում

7 Ընդունելի չենք համարում կար բառի համեմատությունը հուն. ζέϊρα ճառասան, լվանս և դրանց ցեղակից բառերի հետ, որոնք հանգում են հնիս. ker՝ ճառասան-հյուսել, կապել» արմատին, որովհետև k՝ հայերենում տալիս է ս. այդ արմատից ունենք սարիս:

է, ակ, ինչպես որ sd-ն էլ դասնում է ստ (օր. nizd- > հայ. նիստ)։ Այս նույն արմատի azgV- տարրերակից է ծագում հայ. ածյուն բառերը մեղայի ոսկորներից գոյացած հոդր, իսկ azgh- տարրերակից՝ աղաղել շարացնել (Արմ., Ա, 22, 175)։ Մեր ասլին բառը կապվում է հնիւ. արմատի «փայլել. շողալ» իմաստի հետ, ըստ որում ստակը համեմատվում էր «կայծ շողացող, կրակ» հասկացությունների հետ. այս են հաստատում ՆՀԲ-ում ստակ բառի սակ բերված՝ «Ստակն կարկեհանն է և յականց Կիրքն կայծ ասի» վկայությունը, ինչպես և կայծ բառի «կարկեհան, ստակ» իմաստը։

ԱՌԱՎԻՐ, ՎԵՌ

Հին մատենագրության մեջ զործածվել է, բայց ոչ հաճախ. իմաստն է «իզար, անօգատ, դատարկ տեղը»։ այս բառից է առաւելիակն ժանտեղի, դուր, անօգատ։ Բառի կազմության մասին Հր. Աճառյանը (Արմ., Ա, 504) անորոշության մեջ է. «հայտնի չէ, թե բառի մեջ առ նախդի» է, թե արմատական։ Մեր կարծիքով առ(ա)- ածանց է. և սրմասն է վիր. ծագում է հնիւ. քեր «հանդիսավոր կերպով խոսել, ասել» արմատից։ Յեղակից լեզուների գուգահեռներն են. ավեստ. urvāta- «սահմանում, վճիռ, պատվեր», հին հնդկ. vrata- «պատվեր, ախտ». հին հիկեցաոլափոնական rota «երկուս», հուն. ἔρω «խոսել», ῥήμα «բառ, բայ», ῥήτωρ «խոսք», ռուս. बात «ստակ, կեղծել», врака (ստակել. հոգն. враки) «բարբառանք, դատարկարանություն» և այլն (Պոկ., 1162)։ Ըստ այսմ՝ հայ. վեր նշանակել է «դատարկարանություն, բարբառանք, շողփաղփանք» և առ նախածանցով՝ առաւելի՝ ստացել է նախ՝ «դատարկ խոսք, իզուր խոսակցություն», ապա և՛ պարզպակս «իզուր, անտեղի, պարապ տեղը» նշանակությունը։

Այս նույն արմատի SO-ով աճած ձևից ենք կարծում նաև վեռ բառը, որ Աճառյանը (Արմ., Զ, 634) կասկածանքով բացատրում է «կամապաշտ, փեսա». բառը զործածվել է Ախտարքում շլինի վեռ, կամապաշտ, լեզուանի» կապակցությամբ, ուստի և ավելի հարմար է «դատարկարան, շողակրտտ, շողփաղփ» իմաստը, ըստ որում կապակցության մեջ արդեն կամապաշտ բառը կա։

ՄԷՏ, ՄԵՏ

Մեա-ը կշեռքի լծակի միջին կետն է, ապա՝ «կշեռքի նժար՝ թաթ», որից ծաղիլ են միտել «հակել, թեքել, ծռել», միտիլ «հակվել, թեքվել» հավանություն գալ, միտում «հակում, ձգում, դիտավորություն» և այլն։ Ծագում է հնիւ. mēd- «չափել, կշռել» արմատից. ցեղակից ձևերն են. հին հնդկ. masti «կշռել, չափել», հուն. μέτρον «դիտավորություն ունենալ, մտածել, ձգակել», μέτρον «սորուն նյութերի չափի միավոր», լատ. meditor «մտածել», modus «չափ. ձև, կերպ, եղանակ», գոթ. mitan, անգլ. metan, հին բարձր. գերմ. mezzan «չափել, կշռել», հին իսլ. meta «գնահատել», met «կշիռ, ծանրություն», անգլ. ge-met «չափել, կշռել», հին բարձր. գերմ. mer «չափ, դավաթ, անոթ», անգլ. mita «հացահատիկի չափ» և այլն։ Այս նույն արմատից է ծագում հայ. միտ «միտք» բառը, ինչպես և՛ մեա «մեղտեղ», մետալակն «միջին, միջակ» (զործածվել է բայի մասին՝ «հասարակ

րայ) նշանակութիամբ): Հայերենի միտ ծագում է արմատի med ձևից, մեա-ը med-ից. իսկ մեա-ը ենթադրամ է meid- երկրարբառով ձև:

ԿԻՐ, ԿՐԵԼ, ԿԱՐ (ԿԱՐԱԻՏ, ԿԱՐԻՔ)

Կենսունակ արմատ է, որ ավել է բազմաթիվ ածանցավոր ձևեր, բարդաթյաններ, ինչպես և՛ իմաստի ընդարձակ ճյուղավորում: Նախնական իմաստը, ինչպես ցույց է ապիս Աճառյանը (Արմ., Գ, 1207—8), ևզել է քրեանելով աանել: Ծագում է հնի. ց^uer արմատից, որի իմաստն է «ծանր»։ այս իմաստից բխել են մի կողմից՝ ծանրություն բնորոշվող առարկաների անուններ (աղորիք, աղացաքար, ևրկան, բեռ են), մյուս կողմից՝ աժ. սասակաթյուն, բունություն. նեղություն իմաստով բառեր: Հայերենում առաջին խմբի բառերից ունենք ևրկան (< ց^u rānā > րկան > ևրկան), ևրկորդ խմբից՝ կարչն թուժ (< ց^u rsnu) և կիր (< ց^u er), կրել բառերը: Այդ բառի զուգահեռներից են. հին հնդկ. ց^uruh «ծանր, ծանրակշիռ, կարեոր», ավեսա. ց^uru «ծանր», պրսկ. ց^uran «ծանր», հուն. βραχ «ծանր», βραχων «ծանրացնել, բեռնավորել, հոգնեցնել», βραχ «ծանրություն», βραχον «կշիռ, ծանրություն, բեռ», βραχον «կարեոր, ծանրակշիռ», հին իսլ. brig թուժ, կարողություն, կիր. br «ծանրություն, արժեքավորություն, արժանավորություն» և այլն:

Այս արմատից ենք կարծում նաև կար ևհարկավորություն, պետք (կարիք, կարօա, կար-ևոր) բառը: Ձևժ, ճնշում, ծանրություն → քպետք, կարիք, կարեւորություն. իմաստի անցման համար հմմա. հայ. աղց քպետք, կարիք < ասոր. elas, որ նշանակել է «ճնշել, հարկադրել, բռնադատել»⁸

Ա Ր Գ Ա Տ

Այս բառը հիշում է նորայր Բյուզանդացին իր Ֆրանս-հայերեն բառարանում որպես միջին հայերեն բառ, ունի նաև Երեմիա Մեղրեցին, որոնցից առել է նաև Հր. Աճառյանը (Արմ., Ա, 643), Արարալյան բարբառում, ինչպես և ուրիշ բարբառներում, գործածվում է արքադ, արքատ ձևերով և նշանակում է «խաղողի որթի կարած ոսա՝ մաս»։ Անշուշտ բառի հնագույն ձևն է արգատ. որի մեջ գ-ն ր-ից հետո վերածվել է ք-ի (ինչպես՝ կարգ > կարք, մարգարիտ > մարքարիտ են) և վերջին ա-ն էլ ձայնեղացել է արարալյան բարբառին հատուկ հնչունական օրենքով, Ծագում է հնի. u(e)rađ- արմատի քrad- տարբերակից՝ գրատ > րգատ > արգատ հաջորդական փոփոխություններով: Հնի. արմատի իմաստն է «ճյուղ, արմատ, ոստ, ճիպոտ»։ ցնդակից լեզուների ձևերն են հուն. ῥαίζ «ճյուղ, ոստ, ճիպոտ», ῥαίζα «ճյուղ (էոլ. Φρόζιλον)» «մատաղ ոստ», արք. rānā «արմատ», լատ. radix «արմատ», կիր. gwraidd (< * քradio) «արմատներ», gwrisg «ոստ, ճյուղ», հին կորն. grue ten «արմատ», գրթ. wourts «արմատ», անգլ. wuz «բույս. արմատիք», հին իսլ. u:tt «արմատիք, սագարթ», rot «արմատ» և այլն (Պոկ., 1181): Հայերենում քr > րգ փոփոխության համար համեմատելի է հնի. քreg' > հայ. ևրգիծաբել (< * րգիծաբել < * քրիծաբել):

⁸ Հնդունելի չենք համարում կար-իք կար-աւտ բառերի կար արմատը լատ. carus «թանկագին, սիրելի», լատիշ. kārņus «տանջալ» և այլ բառերի հետ հնի. *ka-ro < *ka- «ցանկալու», տեղալ» արմատից բխեցնելը, որովհետև հնի. K (q) հայերենում ապիս է f b ո. կ:

ԵՂԵՐ, ԵՂԱՐ

Իսկ իմաստն է սողը, կրծք, ատանձին չի գործածվում. իսկ բարդությանների և տծանցումների մեջ էլ ժամանակակից լեզվում միակ ընդհանրացած ձևն է ևղևր, սակայն հնում եղել է նաև ևղար, որից՝ ևղարամայր սողրատաց կինք, հետադարձում այս ձևն էլ փոխարինվել է ընդհանրացած ևղևր- ձևով և դարձել ևղևրամայր: Ծագում է հնիս. el-ol- ընածայնական արմատից, որի ցեղակից ձևերն են. հուն. ἔλας, Եփեսոսի նման ճչացող, կնամարդի, կնաս, Գրեյսից: սողրալք, Գրեյսից, սողր. լացուկրծք, Եփեսոսից ԵԼ. սղր. Զ. սղրերդ, եղերերդ, ԵԼՅԵՑ Եղավակցություն, վշտակցություն, հին իսլ. jalmr Եղամուկ, աղանապք և այլն: Ըստ այսմ՝ մեր բառի արմատն է ևղ-, իսկ -ար ածանց է (հմմտ. արգար, մեծար, հրաժար և այլն). ինչ վերաբերում է -ևյ-ին (եղ-եր), ապա կարծում ենք, թե դա ստացվել է նախահունչ և-ի տոնմանությամբ, եթե, ի հարկե, դա ևս մի անծանոթ ածանց չէ:

Այս նույն արմատից Վալդեն և Պոկոնին հանում են հայ. աղմուկ բառը, իսկ Պոկոնին՝ հենվելով Պիդանիի վրա, բխեցնում է նաև աղսք, ողբ, ողոք բառերը. դրանցից աստիճին չը. Աճառյանը չի ընդանում՝ իմաստի անհամապատասխանության պատճառով (աղմուկ հնում նշանակել է Երամանցում, իստնաշիրտություն, կրիվք). աղսք բառի կապը հավանական է թվում, բայց դրա համար արմատի el-, ol- ձևերի հետ հարկ կլինի կանխադրել նաև al- ձևը. այդ դեպքում կունենանք աղ- արմատը՝ աղ-ա-չել և աղ-ալք(ք) բառերի համար: Ինչ վերաբերում է ողբ և ողոք Ելաց, սղրք բառերին, ապա դրանց ծագումը հիշյալ արմատից վաղուց հայտնի է:

Լ Մ Ե Լ

Արմատն է լում, որ պահված է զլուրալում Եհեշտ լմվող, կախուղք բարդություն մեջ. պարզ լմել բայը նշանակում է ճամլել, ճմուռել, կակղացնել, կրկնական կազմություններ են լմլմել, լմլմոթել (կա նաև լումլումել, որ բարբառալին ձև է՝ ու > ո փոփոխություն): Ծագում է հնիս. lem-/lom- մանրացնել, ամանրացված. կախուղ, փափուկ, արմատից: Զուգահեռներն են. ալթ. lemē Եկալ, ձիթհանք, հին բարձր գերմ., հին սաքս. lam. հին իսլ. lamí Եանդամայուլք, հաշմ, լատիշ. l'imstu, l'imt, լիտվ. limte Երևաան տակ կքել, հին բուլղ. loml'jօ Եկոտրել, ջարդել, սոս. лом Ենիդ, հոգն. ломы Եջարդվածք, կոտրվածք և այլն (Պոկ., 674). Հալերենն ստացվել է արմատի միջին աստիճանի ձայնդարձից՝ lom. որ պահված է նաև գերմոնական և սլավոնական լեզուներում⁹:

ԼԵՍՈՒԼԼՈՍԵԼ

Հնադուլն իմաստն է ճամլել, ճզմել, որից՝ ամանրել, փշրել, փոշիացնել, բարբառներում լացնորեն գործածվում է արմատի ո ձայնավորով ձևը՝ լուել, որ բացի ամանրել նշանակությունից ունի նաև Եհուտնել, հետանով սրել իմաստը. իմաստային այս անցումը կապված է արմատի հնադուլն (հնդեվրոպական) Ետրորել նշանակության հետ: Ծագում է հնիս. kleik'-

⁹ Ինչպես մեզ հայտնեց պրոֆ. Գ. Բ. Զահուկյանը, այս ստուգաբանությունը մեզանից անկախ առաջարկել է ինքը՝ իր տպագրվող «Հայ բարբառագիտության ներածություն» մեջ:

«ցավ պատճառելով տրորել, ճնշել, ճզմել, ճմլել» արմատից, որի ժառանգներն են. հին հնդկ. *kliṣnati* «տանջված», *sain-kliś* «ճմլել», լիտ. *klišė* «ունելի», եկեղեցասլավոնական *klešta* «ունելի», *kleštiti* «ճմլել, տրորել», ռուս. (բարբառային) *клевстить* «ճնշել, ճմլել, ճզմել», *клевши* «ունելի» և այլն (Պոկ., 602); Հնիւ. *k* բառակազմում *l*-ից առաջ հայերենում ընկնում է (հմմտ. *kleu-* > հայ. լու (լսել բալի արմատը). *kleitno* > հայ. լեռու և այլն). *ei* երկբարբառը հայերենում պեաք է տար *ե*, որից՝ լիսուլ (և ոչ՝ լեսուլ). սակայն լես և լուս ձևերի *e/o* ձայնդարձը թուրք է սալիս կանխադրելու հնիւ. արմատի *klek'*, *klök'* չընդարձակված տիպը, որով վերանում է հնչյունական անհամապատասխանության խնդիրը:

Հ Ե Ի Ս / 2 Ի Ի Ս

Թե՛ զրաբարում և թե՛ ժամանակակից լեզվում ու բարբառներում շատ կենսատնակ բառ է, որից բազմաթիվ բարդություններ ու սծանցամուներ տնենք իմաստային տարբեր անցումներով (հմմտ. *հյուսք*, *հյուսել* «մագերը հյուսք անել, գործել, հորինել» են): Ծագում է հնիւ. **pek'* «բուրդը կամ մագերը քոշել՝ փետել. բուրդ, գլխի մագա արմատից, որ սվել է բազմաթիվ բուրդ՝ բբարդ, մագ, սանրել, գզել, բրդոտ (սրանից նաև կենդանիների, մասնավորապես՝ ոչխարի, տնվանումներ) և այլն: Մեր բառի նախնական իմաստն է՝ «մագերը սանրել՝ սանրելով պատրաստել», որից՝ սանրվածք, հյուսք: Այս իմաստի համար մեր բառի հետ համեմատելի են. հուն. *πέχω*, *πέχωτο*, *πέχτες* «սանրել, խուզել», *πέχου* «ասր, գեզմ», *πέχου* «սանր», լատ. *pecto* «սանրել», *pecten* «սանր», ալբ. *pile* «վուշ գզելու գործիք», հին բարձր գերմ. *fāns*. «անգսք. *feax* «հեր, վարս», հին իսլ. *fax* «հյուս, վարս, ձիու բաշ», անգսք. *feht* «գեզմ» և այլն (Պոկ., 797); Հնիւ. արմատն տնի ձայնդարձի բոլոր աստիճաններն ու բազմաթիվ աճած ձևեր. մեր բուրդ ժագում է արմատի *peuk'*՝ տարբերակից, որ հայերենում սվել է հելս և հիւս, ինչպես ունենք ալել/ալիւր, հարել/հարիւր, գելը/գիւղ. եղել/եղջիւր, աղել/աղիւր, հարել/հարիւր և այլն (բոլորի մեջ էլ ել/իւ ծագում է հնիւ. *eu* երկբարբառից): Այս նույն արմատի **pokii-* ձևից է ծագում նաև մեր ալբ բուրդ (տե՛ս Արմ., Ա, 582—584 և Պոկ., 797):

Ա Ռ Ա Ի Օ Տ

Հայերենի շատ զործածական բառերից է, որ, սակայն, ոչ միայն ստուգաբանված չէ, այլև կազմութիւմբ անորոշ է. ոմանք առ- համարում են ածանց, ոմանք՝ ոչ: Մենք արմատն ենք համարում առ, իսկ առ- և աւտ(տ) ածանցներ. առաջին ածանցը շատ հայտնի է, և կրկնելու հարկ չկա: Երկրորդի համար որպես համեմատելի կազմութիւններ տնենք աղաւտ(աղտ), կարաւտ (կարտ). այս բառերին պետք է միացնել նաև արաւտ(արտ), սրա արմատն է ար-, որից կազմված են նուև արածել և արատ. ընդունված է -աւտ(տ)-ի, -աւտ-ի (ար-ատ) և ած-ի (ար-ած) միջև տեսնել այնպիսի հարաբերություն, ինչպիսին կա մաւտ-մատ (մատչիմ-մատհալ), գած (զգածիմ, առիգած) և գաւտ (զօտի, պարեզօտ) և նման բառերի միջև: Սակայն այդ բառերի կազմութիւնն էլ պարզ չէ, թեև ծագումը հայտնի է: Արաւտ բառի համար աւտ-ը

պիտք է սծանոյ համարել, որով արած-, արաւ բառերի հետ կկապվի միայն արմատով (հնիւ. արմատն է *ter/տր. որից՝ ք'-ով աճած *treg' ձևից ունենր արած-. արաւ-ը պէտք է կապել նույն արմատի լ-ով աճած ձևի հետ (*tred). հմմա. կիմբ. trwyddo «պատտել, ծակել», լիտ. triedziu „habe starken Durchfall“ են, և արաւտ-ը՝ տր — աւտ > արաւտ): Այս -աւաւ ածանցով կազմութիւնները շատ հին են, ավելի ճիշտ՝ հնութիւն մնացորդներ. այդպիսին է նաև աւաւաւաւ(աւաւաւաւ) բառի կազմութիւնը: Առանց նախածանցի անենք աւաւաւ (աւաւ) բառը, որի մասին չր. Աճատյանը գրամ է. ժշատ անստույգ նշանակութիւն մի բառ է, որ գործածվում է 'լանակ. հաւատ. ստուգարանական հետեյալ մասի հատվածում. «Հաւատն լոյս. հաւն սկիզբն է ասն զօրութիւն զործոյ. գհոյն(հ) գիր ի բաց աս, աւաւ ասի. ամենայն ի դէպ բանի ասնն՝ թէ աւաւա կոյ. և ստաւաւ ասնն զսկիզբն աւաւն. որպես աւաւ արեգակն զալոյ»: Այս բառից են կազմված անշուշտ շաղաւուս եգիշերվա ժամը չորսը՝ բոտ արեկլլան ժամահաշոյի» և կամաւաւս եգիշերվա ժամի հինգը»: — Ըստ իս աւաւ նշանակում է «ժամանակ» (Արմ., Ա, 824): Մեզ թվում է, թէ հատվածն այնքան էլ մասի չէ. ինչպես այն թվում է առաջին հայացքից. հեղինակը հաւաւտ-ը համեմատում է լույսի հետ, ապա՝ բառը բաժանելով երկու մասի (իբր թէ բաղադրիչներին)՝ հաւ բացատրում է «սկիզբ» (իբրք անենք էլ հաւ. սկիզբ, ծալք» բառը), իսկ ասւ՝ «զօրութիւն». սա արդեն պարզ չէ. աւաւ՝ ի բառը նկատի ունի, հաւաւել բառի աւաւ-ը որպես բարդակցականների բաղադրիչ (պոչաւ, գլխատել են), թէ՛ մի այլ. անծանոթ բառ?): այնահետե հեղինակը բառի սկիզբից հանում է հ-ն, որով ստանում է աւաւ, բայց սա էլ դարձնում է աւաւաւ (աւաւաւ). այս բառի համար էլ քերտում է աւաւաւաւ կլաճ դարձվածը, որ թառում են ամեն բանի (զործի) ասիթով. դա, ինչպես իր խոսքերից է բխում, նշանակում է «ժամանակ կա». վերջապես այդ աւաւաւ բառի համար էլ գրում է, թէ աւաւաւ-ը արեգակի դայու ժամանակն է: Բառի համար մեզ հենց այս վերջինն է կարևոր. հեղինակը բացատրում է, որ աւաւաւ-ը արեգի գալա ժամանակն է, այսինքն՝ արևաղայ, արևածագ: Այսպիսով, ահա, ունենում ենք աւաւ և աւաւաւ բառերը, որոնք, եթէ ստուգարանորեն բացատրենք, նշանակում են. առաջինը՝ «արեգակ, արևածագ», երկրորդը՝ «արևածագի դեմ, լուսաբաց»: Համարելով երկու բառերի արմատը -աւ-, մենք այն բխցնում ենք հնիւ. *sau-el/sauol, suuel-, sūl «արեգակ» արմատից, որի ժառանգներն են. հին հնդկ. suvar = ավաւաւ. livarā «արեգակ, լույս, երկինք», հին հնդկ. surta «պայծառ, լուսավոր», հուն. հոմեր. ἥλιος, աստիկ. ἥλιος, գոր. ἥλιος, անուշ «արեգակ», լատ. sol. «արեգակ», գոթ. sauil, հին իսլ. söl «արեգակ», հին իսլ. and-solis, հին շվեդ. and-svllis «արեգ դարձած՝ մայր մտած» (der sonne zugewendet), լիտ. և լատիշ. sūlė «արեգակ», ռուս. солнце «արեգակ», հին բարձր գերմ. sundar «հարաւ» և այլն (Պոկ., 881—882): Հնիւ. sau-el բառի պարզ արմատն է sau, որ հայերեն տալիս է աւ (նախահունչ s-ի անկումը սովորական է. նույնիսկ այն դեպքերում, երբ բառասկզբի s-ի դիմաց հայերենում անենք հ, ըստ. Ա. Մելիքի, ոչ թէ ունենք հնիւ. s > հայ. հ հնչունավորութիւնը, այլ s-ի անկումից հետո հ-ի հավելում հայկական հոգի վրա): Հնդկ-բարդական այդ արմատի մասին է. Բենյամինոտը հետեյալն է գրում. «Յորոշ չափով, այսինքն՝ կարճ ձայնավորով, -el-ը մտնում է հնդկ-բարդական բառապաշարի ամենահին բառերից մեկի կազմի մեջ. *sau-el «արեգակ»-*sāu

«փայլել» արմատի անբուն (աթեմաաիկ) բաղադրություն մեջ, որ լեզվից լեզու երևան է բերում երկակի, ծալրահեղորեն հնատիպ բնույթի հերթադալություն՝ արմատական և ածանցական: Sāy-el-ի կողքին և, հավանաբար, նրա համապատասխանությունը կազմված, կգետեղվի սարին. *ausel «այգարշալույս» ... Հնդեվրոպական *sāuel-ի մեջ -el- տարրը ածանց է ներկայացնում, և միայն *sāy-ն է ստանում ածանցներ ու վերջավորություններ և, աճած լինելով, կրճատվում-դառնում է *sū: Ինչպես kerd (հուն շտր) տալիս է եզ. սեռ. krd-e/os (լատ. cordis), այնպես էլ *sāy պետք է տար *su-e/os, որը հնչյունաբանորեն վերածվեց պիեստ. h(u)vō-ի. մյուս կողմից. sām-ից -en-ի հավելումով կազմվել է բաղադրյալ *sū-en/sun (դոթ. sunno) գուպահեռ sū-el/sūl-ին (վեդայական svar, sū'rah): Suens (գաթաների *vāng) հայնապես առաջացել է բաղադրյալ sūen (ավեստ. *vanvant «արևալին») և արմատական սեռ. հոլ. *sūes (ավեստ. huvō) ձևերի փոխազդեցությունում: Այս sūens-ը որպես սեռական հոլով կրկնակի անկանոն է. և՛ իր sūen հիմքով փոխանակ sun-ի, և՛ իր -s- վերջավորությամբ՝ փոխանակ *-e/os. Եթե sūen-ը արմատանար իրանական հոլովման մեջ, նա պետք է տար սեռ.— բաց. hūno. քանի որ sūel-ը տալիս է huro¹⁰, Ալոպիսով, մեր առաջաբանի մեջ ունենք հնդեվրոպական հնադարյան մի արմատ՝ *sāu, որ պահպանվել է առանց -el,-en ածանցների:

Յ Ա Յ Լ Ք

Հնում նշանակել է «ազումեջ, շեք», ժամանակակից լեզվում, մասնավորապես բժշկական տերմինաբանություն մեջ, գործածվում է «կոնքի ոսկորների առջի աճոնը, ինչպես և դրա թմբիկը, pubes, ладок» իմաստով: Նույն արմատից են կազմված, ըստ Աճառյանի (Արմ., 2, 1046), ցալակ «ազեթափություն ցալից, ֆրանս. bubonocèle» Ջելթունի բարբառի ցելոլ, ցելոլ «լախ քալով վրալից անցնել» (հմմտ. զվո. շեք, շեքել): Ցալք-ը ունի նաև ցալք գրչությունը: Ծագում է հնի. sqel-, qel- «ճկել, կորացնել. ծուռ, շեղ» արմատից, որից կազմվել են մարմնի մասերի անուններ (հոգ, գարշապար, կոնք, ազդր, ծունկ ևն). իմաստի տեսակետից մեր բառին մերձավոր են հին հնդկ. káta-h, kati-h, kaṭi «կոնք, ազդր», հուն. γαστήρ «ազդր», σελίς «կող (կենդանու)», κώλον «անդամ», κώλεα «ազդրոսկր», «1. ազդր, զիստ. 2. առնի, membrum virilis», κώληψ «ծնկատակի փոս», լիտ. kelys, լատիշ celis «ծունկ», լիտ. kenklė «ծնկատակի փոս», küise «զիստ, ազդր», բուլղար. kǎlka «զիստ, ազդր», սլովեն. kolk «ազդր, զիստ», լատ. calx «գարշապար, կրունկ» և ալլն (Պոկ., 928), Հայերենը ծագում է արմատի *skōli-, skōlli- տարբերակից (Պոկ., 928), որ օրինաչափորեն տալիս է ցալլ (հմմտ. հնի. *ali-o > հայ. ալլ): Ցալակ բառը միջին հայերենից է ավանդված, և պետք է կարծել. որ ցալ- ոտացվել է ալ > ա հնչյունափոխությամբ: Սակայն եթե ցալ- պարզ ձայնավորով ձևը (երկրաբառի փոխարեն) նախնական լինի, պետք է դնել արմատի *skol ձևից (Պոկ., 928): Նույն արմատի qel (khel-) տարբերակից է ծագում նաև հայ. խեղ բառը, ինչպես և՛ *qhelrs

¹⁰ E. Benvenisti, Origines de la formation des noms en indo-européen, Paris, 1935, էջ 42-43 և 65-66:

տարրերակից՝ շեղ, շիլ, շաղ, որոնց հնչյունական սիոսիտիությունները, սակայն, դեռևս բավարար չափով լսոտորանված ու հիմնավորված չեն:

Ի. Ն. Ջահկյանը իր «Очерки по истории дописьменного периода древнеармянского языка» աշխատության մեջ ցալլ բառը նախ դնում է հնիւ. *kel «թաքցնել, ծածկել» արմատից (էջ 179), ծանոթության մեջ նշելով, որ ավելի հարմար է բխցնել հնիւ. skilji. (s)kel «ծոռել, ճկել» արմատից, որից հանում է նաև քալլ, ապա՝ (էջ 223, 257—8, 303, 304, 307, 309) իրար է միացնում ցալլ, քալլ, իւնղ, կաղ, ծալ, ծղի, ծղիւնի, շեղ, շիլ բառերը. թվում է, թե կաղ, ծալ, ծղի, ծղիւնի բառերը չպետք է կապել ավստրաթի հետ:

Ա Ռ Ա Ք Ի Ն Ի

Նախնական իմաստն է «քաշ, կարիճ», որից ստացվել են՝ կրոնական տառումով՝ «բարեպաշտ», բարոյական տառումով՝ «անբասիր, բարոյապես մաքար» նշանակությունները. արմատն է քեմ, իսկ առա- և -ի ածանցներ են: Ծագում է հնիւ. *qet- (ket-) «կտիվ» արմատից, որից են. գալլ. catu- «կտիվ», իսլ. cath «կտիվ», հին իսլ. hǫotr «մի ասածու անուն», անգլ. hearo, հին բարձր գերմ. hadu- «կտիվ», միջին բարձր գերմ. hader «վեճ, կտիվ», հին լատիներ. katora «կտիվ», կիմր. cadr «ուժեղ, արի», cadarn «հզոր», բրև. cǎdarn «քաշ, կարիճ, արի» և ալլն: Հայերենի համար պետք է կանխադրել հնիւ. արմատի n ձևորդով աճած *qetən սարերակը (qetən > հալ. քեյն > քե, որից՝ -ի ածանցով՝ քինի), ինչպես որ բուլղարերեն, կիմրերեն, գերմաներեն և բրևաներեն ձևերի համար էլ կանխադրվում է r ձևորդով ձևը (Walde-Pokorny, I, 339):

ЭТИМОЛОГИЯ НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ СЛОВ

Э. Б. АГАЯН

Резюме

В статье предлагается этимология следующих армянских слов: Առիք—arik' «потолок», ընձուիլ—enjwil «рости, цвести», ուրդ—urd «русло» կոր—kar «нить, шитье», անց—anc «проход», ասկն—askn «рубин», առախիր—arawir, (корень—wir, «пустословие», մէս (մես—met) met «чашка (весов)», կիր, կրել—kir «тяжесть; нести», արգատ—argat «сухая виноградная лоза», հիւս/հեւս—hiws) hews «ксса», առաւաւտ—arawawt «утро», լմել—lmet «месить», լեւուլ/լոսել—lesul/losel «давить, щемить».